Ուսուցիչների վերապատրաստում

Աշխարհագրության հետազոտական աշխատանք

Թեմա՝ "Համամոլորակային ժողովրդագրական հիմնախնդիրը"

Երևանի հ. 75 հիմնական դպրոցի ուսուցչուհի՝

Ն. Ռաֆաելյան

Դասախոս՝ Ա. Խաչատրյան

Լեոյի անվան հ. 65 ավագ դպրոց

Երևան 2022 թ.

Ժողովրդագրական հիմնախնդրի էությունը առաջին հերթին կապված է բնակչության աճի բարձր տեմպերի հետ, որոնք հանգեցնում են նրանց՝ պարենով, բնակարանով, աշխատանքով, կրթությամբ ապահովելու խնդիրներով, մեծանում է բնակչության խտությունը հատկապես խոշոր քաղաքներում, ավելանում է բնական միջավայրի նկատմամբ ճնշումը, աճում են հիվանդությունների քանակը, սրվում է քրեածին իրադրությունը և այլն։ Այս հիմնախնդիրն ունի առանձնահատուկ կարևորություն, քանի որ նրա լուծումից է մեծապես կախված է համաշխարհային մի շարք հիմնախնդիրների լուծումը։

Հիմնախնդրի էությունը

Ներկայումս աշխարհի բնակչությունը արագորեն աճում է։ Եթե նախկինում բնության նկատմամբ մեծ կախվածության պատճառով աշխարհի բնակչությունը դանդաղորեն էր աճում, ապա այժմ կապված առողջապահության զարգացման հետ մեծացել է մարդկանց կյանքի միջին տևողությունը։ Եթե մեր թվարկության սկզբին աշխարհի բնակչությունը կազմում էր մոտ 250 միլիոն մարդ, ապա 2000 թվականին այն հասավ 6 միլիարդի, իսկ այժմ այն կազմում է ավելի քան 7 միլիարդ մարդ [1]։

Մասնագետների մեծ մասը գտնում են, որ հիմնական խնդիրը կապված է ժողովրդագրական պայթյունի հետ, որի լուծումը էականորեն կմեղմի ստեղծված իրավիճակը։ Իսկ դրան հասնելու համար կարևոր են ժողովրդագրական կարճաժամկետ և երկարաժամկետ կանխատեսումները։

Մինչև 2025 թվականի ժողովրդագրական կանխատեսումը հասցրել է արդեն մի քանի անգամ փոփոխվել։ 1990-ական թվականներին ՄԱԿ-ի փորձագետները գտնում էին, որ աշխարհի բնակչությունը 2010 թվականին կհասնի 7,2 միլիարդի, 2020-ին՝ 8 միլիարդ, իսկ 2025-ին՝ 8,5 միլիարդի։ Այս տվյալները հնչել են Ռիո դե Ժանեյրոյի վեհաժողովում։ Սակայն կապված բնակչության աճի տեմպերի էական նվազման հետ այս թվերը փոխվեցին, 2025 թվականի համար այն նվազեց մինչև 7,8 միլիարդ մարդու։ Այս առումով հետաքրքիր է նաև բնակչության աճի կանխատեսումները զարգացող և զարգացած երկրներում։ 2025 թվականին զարգացած երկրներում սպասվում է բնակչության 20-30 միլիոն աճ, որի արդյունքում բնակչությունը կկազմի 102 միլիարդ մարդ («ոսկյա միլիարդ»), իսկ զարգացող երկրներում նույն ժամանակահատվածում սպասվում է բնակչության 2 միլիարդ աճ, որով բնակչության թիվը կկազմի 6,6 միլիարդ մարդ [1]։

Մինչև 2050 թվականի համար ժողովրդագրական կանխատեսումը ենթադրում է, որ աշխարհի բնկաչությունը կհասնի 8,9 միլիարդ մարդու։ Ըստ խոշոր տարածաջրջանների (առանց ԱՊՀ)՝ բնակչության տեղաբաշխումը կունենա հետևյալ պատկերը. Ասիա՝ 5,2 միլիարդ, Աֆրիկա՝ 1,8 միլիարդ, Լատինական Ամերիկա՝ 770 միլիոն, Եվրոպա՝ մոտ 650 միլիոն, Հյուսիսային Ամերիկա՝ 450 միլիոն և Ավստրալիա ու Օվկիանիա՝ 45 միլիոն մարդ [2]։

Հայաստանի Հանրապետության համար բոլոր երկարաժամկետ կանխատեսումները հիմնվում են բնակչության շարունակական նվազման վրա։

Բնակչության թվով աշխարհի ամենամեծ պետությունները 2000, 2025 և 2050 թվականներին[1]

Պետություն	Բնակչության թիվը 2000 թվականին (մլն. մարդ)	Պետություն	Բնակչության թիվը 2025 թվականին (մլն. մարդ, կանխատեսում)	Պետություն	Բնկաչության թիվը 2050 թվականին(մլն. մարդ, կանխատեսում)
Չինաստան	1261	Չինաստան	1490	Հնդկաստան	1628
Հնդկաստան	1014	Հնդկաստան	1330	Չինաստան	1395
ԱՄՆ	281	ԱՄՆ	346	ԱՄՆ	409
Ինդոնեզիա	212	Ինդոնեզիա	275	Պակիստան	349
Բրազիլիա	170	Պակիստան	265	Ինդոնեզիա	294
Պակիստան	156	Բրազիլիա	220	Նիգերիա	258
Ռուսաստան	145	Նիգերիա	205	Բանգլադեշ	255
Բանգլադեշ	130	Բանգլադեշ	180	Բրազիլիա	233
Ճապոնիա	127	Ռուսաստան	130	Եթովպիա	170
Նիգերիա	112	Մեքսիկա	130	Կոնգոյի ԴՀ	152

Մեքսիկա	100	Ճապոնիա	120	Մեքսիկա	140
Գերմանիա	82	Եթովպիա	115	Ֆիլիպիններ	127
Վիետնամ	79	Վիետնամ	110	Եգիպտոս	127
Ֆիլիպիններ	76	Ֆիլիպիններ	110	Վիետնամ	118
Եգիպտոս	68	Կոնգոյի ԴՀ	105	Ճապոնիա	110
Իրան	68	Եգիպտոս	95	Իրան	106
Թուրքիա	66	Իրան	95	Ռուսաստան	102
Եթովպիա	64	Թուրքիա	88	Թուրքիա	88
Թաիլանդ	61	Գերմանիա	80	Թաիլանդ	90
Ֆրանսիա	59	Թաիլանդ	73	Մյանմա	80

Լուծման ուղիներ

Հիմնախնդրի կարևորության մեծ նշանակություն ունեցան ՄԱԿ-ի կողմից անցկացված Համաշխարհային երեք կոնֆերանսները, որոնք տեղի ունեցան Բուխարեստում՝ 1974 թվականին, Մեխիկոյում՝ 1984 թվականին և Կահիրեում՝ 1994 թվականին: Բուխարեստում կայացած կոնֆերանսում ընդունվեց «Ազգաբնակչության ոլորտում գործողությունների համաշխարհային պլան»-ը: Ըստ որի ազգաբնակչության քաղաքականության մեջ պետք է ներդրվի սոցիալ-տնտեսական բարեփոխումները: Այն հաստատվեց նաև Մեխիկոյի կոնֆերանսում: Կահիրեի կոնֆերանսին մասնակցում էին 179 պետությունների ներկայացուցիչներ, բացի կառավարական ներկայացուցիչներից կոնֆերանսին մասնակցում էին նաև 133 պետություններից հրավիրված 1500 ոչ կառավարական կազմակերպություններ: Ընդունվեց «Ազգաբնակչության ոլորտում գործողությունների ծրագիրը»: Ծրագրում ներկայացված էր ազգաբնակչության հիմնախնդիրը, փոխադարձ կապը բնակչության աճի և տնտեսության զարգացման միջև:

Բացի միջազգային կոնֆերանսներից իրականացվում են նաև ազգաբնակչության հիմնախնդիրների հետ կապված այլ միջազգային միջոցառումներ։ Օրինակ՝ 1989 թվականին Ամստերդամում կայացած «Ազգաբնակչությունը 21-րդ դարում» միջազգային ֆորումը, որտեղ հիմնականում քննարկվեց Կահիրեի կոնֆերանսում ընդունված ծրագրի իրականացման հարցերը։ 1992 թվականին ՄԱԿ-ի շրջակա միջավայրին նվիրված կոնֆերանսում ևս քննարկվեց ազգաբնակչության քաղաքականության հետ կապված հարցեր։ Նշվեց, որ յուրաքանչյուր պետություն ինքը պետք է որոշի և կազմի ժողովրդագրական ծրագրերը՝ հիմնվելով անընդհատ աճող բնակչության կենսապահովության հնարավորություններից։

Մասնագետների մեծամասնության կարծիքով հիմնախնդրի լուծման հիմնական ուղին բնակչության վերարտադրության կարգավորումն է՝ ծնելիության նվազման ճանապարհով։ Այդ պատճառով էլ պետությունները վարում են ակտիվ ժողովրդագրական քաղաքականություն։ Այն էականորեն տարբեր է զարգացած և զարգացող պետություններում։ Եթե զարգացող պետություններում հիմնական նպատակը ծնելիության նվազումն է, ապա զարգացած պետություններում ընդհակառակը խրախուսվում է ծնելությունը, քանի որ այս պետություններում դիտվում է բնակչության դեպոպուլացիա այսինքն՝ նվազում։

Ժողովրդագրական քաղաքականությունը հիմնականում տարվում է երեք ուղղություններով՝ տնտեսական, վարչաիրավական և դաստիարակչական ու քարոզչական։ Այս առումով կիրառվում են բազմաթիվ միջոցներ, ինչպես օրինակ տարբեր նպաստներ, զեղչեր, արտոնություններ, օրենսդրական ակտեր (ամուսնական տարիքի, ամուսնալուծությունների, հղիության ընդհատման, հակաբեղմնավորիչների օգտագործման, աշխատող կանանց աշխատանաքային ռեժիմի իրավական կարգավորումներ և այլն), ժողովրդավարական վարքի նորմերի ձևավորում, ընտանիքի պլանավորման քաղաքականություն, սեռական դաստիարակություն, կրթություն և այլն։

Հիմք ընդունելով այն, որ ծնելիության մակարդակը սերտորեն կապված է երկրի տնտեսական զարգացման հետ՝ կարևոր լուծման ուղի է համարվում նաև պետության տնտեսական զարգացմանը նպաստող միջոցառումների իրականացումը։ Սա համարվում է հիմախնդրի լուծման ինտենսիվ ուղի, որին հասնելը բավական մեծ միջոցներ և ջանքեր է պահանջում։

Կապն այլ հիմախնդիրների հետ

Համաշխարհային ժողովրդագրական հիմնախնդիրը փոխադարձ կապի մեջ է պարենային, ուրբանացման, բնապահպանական, էներգետիկական, հումքային և այլ հիմնախնդիրների հետ։ Չնայած, որ զարգացած երկրների բնակչությունը կազմում է բնակչության ընդամենը 1/4-րդ մասը, սակայն այն սպառում է համաշխարհային էներգիայի, մետաղների, փայտանյութի 80%-ը, սննդամթերքի 35%-ը, և միևնույն ժամանակ տալիս է պինդ թափոնների շուրջ 75%-ը [1]։

Ժողովրդագրական հիմնախնդրի էությունը առաջին հերթին կապված է բնակչության աճի բարձր տեմպերի հետ, որոնք հանգեցնում են նրանց՝ պարենով, բնակարանով, աշխատանքով, կրթությամբ ապահովելու խնդիրներով, մեծանում է բնակչության խտությունը հատկապես խոշոր քաղաքներում, ավելանում է բնական միջավայրի նկատմամբ ճնշումը, աճում են հիվանդությունների քանակը, սրվում է քրեածին իրադրությունը և այլն: Այս հիմնախնդիրն ունի առանձնահատուկ կարևորություն, քանի որ նրա լուծումից է մեծապես կախված է համաշխարհային մի շարք հիմնախնդիրների լուծումը:
Համամոլորակային հիմնախնդիրները՝ արդիականության համամարդկային խնդիրներն են , որոնք շոշափում են ներկա և ապագա սերունդների կենսական շահերը, և որոնց լուծումը պահանջում է բազմաթիվ պետությունների համատեղ ջանքերը: Այդ խնդիրներից կարևորներն են մեր մոլորակի բնակչության ժողովրդագրական իրավիճակի կտրուկ փոփոխությունը, շրջակա միջավայրի աղտոտումը, միջազգային ահաբեկչության լայն տարածումը: Նրանց լուծումը հնարավոր է միայն բոլոր երկրների համատեղ և նպատակասլաց ջանքերի շնորհիվ:



Մարդկության համար առավել հրատապ են հետևյալ համամոլորակային հիմնախնդիրները.

1. Խաղաղության պահպանության հիմնախնդիրը,

2. բնապահպանական հիմնախնդիրը՝ կապված բնական միջավայրի խախտման հետ,
3. զարգացող երկրներում բնակչության արագ աճի հետևանքով առաջացած ժողովրդագրական հիմնախնդիրը,
4. թույլ զարգացած երկրներում հարյուր միլիոնավոր մարդկանց մշտական թերսնման և սովի հետ կապված պարենային հիմնախնդիրը,
5. մորոլակի հանքահումքային և բնական այլ ռեսուրսների սահմանափակվածության հետ կապված էներգետիկ և հումքային հիմնախնդիրը,
6. նախկին գաղութների (զարգացող երկրների) հետամնացության հաղթահարման հիմնախնդիրը, որը, ցավոք, ոչ միայն չի վերանում, այլև երկրագնդի որոշ տարածաշրջաններում դրսևորվում է առավել ցայտուն,
7. համաշխարհային օվկիանոսի հիմնախնդիրը՝ առաջին հերթին կապված նրա կենսաբանական արդյունավետության և աղտոտման հետ,
8. տարածքային և ազգային հակամարտությունների հիմնախնդիրը,
9. կլիմայի փոփոխության հիմնախնդիրը։

Ժողովրդագրական հիմնախնդիրների լուծման համար ամենաբարձր մակարդակով հստակ քաղաքականություն մշակվեց Ռուսաստանում: 2001թ. առաջադրանքներ դրվեցին Ռուսաստանի ժողովրդագրական իրավիճակի բարելավման ուղղությամբ, նշվեցին դրանց իրագործման մեխանիզմները: Այս առումով Ռուսաստանն իրոք անհանգստանալու հիմքեր ուներ: Տարեկան կտրվածքով բնական աճը բացասական էր 600 հազար մարդով, և նման շարունակության պարագայում, ըստ ՄԱԿ-ի ժողովրդագրական քաղաքականության մասնագետների, 2025թ. նրա բնակչության թիվը կկազմեր 130 մլն, իսկ 2050թ.՝ 110 մլն մարդ, որը Ռուսաստանի նման երկրի համար պարզապես կործանում է:Ուստի, ինչպես վկայում են վիճակագրական փաստերը, ազգային ծրագրի շրջանակներում ընդգրկված ժողովրդագրական իրավիճակի բարելավմանն ուղղված քայլերից ելնելով՝ յուրաքանչյուր երկրորդ երեխայի պարագայում 400 հազար ռուբլու հատկացումը տվել է իր առաջին դրական արդյունքները: Արդեն իսկ 5 մլն ռուս ընտանիք օգտվել է մայրական կապիտալի տրամադրած միջոցներից: 2012թ. սկսած Ռուսաստանում ծնունդները սկսել են գերազանցել մահերին, և բնական աճի ցուցանիշը դրական է: Բացի այս առաջին իսկ երեխայի ծնվելու պարագայում ՌԴ կառավարությունը յուրաքանչյուր երեխայի համար ամսական մոտ 170 դոլարին համարժեք գումար է հատկացնում:
2. Աֆրիկայում եւ Մերձավոր արեւելքում ջրի հարցն արդեն սրված է եւ պատճառ է հանդիսանում ոչ միայն հետամնացության եւ աղքատության, այլեւ քաղաքական անկայունության, էթնիկական եւ միջպետական կոնֆլիկտների: Եգիպտոսը, Սուդանը եւ Եթովպիան մշտապես թշնամանքի մեջ են Նեղոսի ջրերի համար: Այդպիսի խնդիր կա պաղեստինցիների եւ հրեաների միջեւ Հորդանանի ջրերի, Թուրքիայի եւ Իրաքի միջեւ՝ Տիգրիս գետի ջրերի, Թուրքիայի եւ Սիրիայի միջեւ՝ Եփրատի ջրերի, Հնդկաստանի եւ Բանգլադեշի միջեւ՝ Գանգես գետի հոսքի համար: Հայաստանի Հանրապետությունում ևս շրջանառության մեջ է դրվել ժողովրդագրական իրավիճակի բարելավման ծրագիրը, որով 1 մլն դրամ է նախատեսված յուրաքանչյուր երրորդ երեխայի ծննդյան համար, ինչպես նաև ծննդաբերության ժամանակ տրամադրվում է ծննդաբերության սերտիֆիկատ: 2016-2018թթ. ժողովրդագրական իրավիճակի բարելավման քաղաքականության մեջ է

ընդգրկված նաև երիտասարդ նորակազմ ընտանիքներին մատչելի բնակարաններով ապահովելու միջնաժամկետ ծրագիրը: Սակայն ընդունված հայեցակարգերը բավարար արդյունք չեն ապահովում, իսկ կյանքը ցույց է տալիս, որ հստակ ժողովրդագրական քաղաքականության բացակայությունը կարող է խիստ բացասական հետևանքներ ունենալ Հայաստանի նման փոքր երկրի համար, որը գտնվում է անկայուն աշխարհաքաղաքական գոտում, ունի ներքին և արտաքին բազմաթիվ լուրջ մարտահրավերներ: Իսկ սրա արդյունքում Հայաստանում արձանագրվում է այն իրողությունը, որ մեր երկիրը կարող է դասվել վերարտադրողական տեսանկյունից անկարողունակ երկրների շարքում, որը կարող է սպառնալ ազգային անվտանգությանը:
Մի խոսքով՝հիմնվելով համամոլորակային խնդիրներին լուծումներ գտնող երկրների փորձի վրա,խելամիտ օգտագործելով հնարավորությունները պետք է միավորվել համաշխարհային հասարակության հետ ու քայլ առ քայլ մոտենալ այն կետին որտեղ մոլորակի ու մարդկանց շահերը համընկնում են:

ա) Ժողովրդագրական իրավիճակի ընդհանուր բնութագիրը XIX դարի վերջում և հատկապես XX դարում երկրի բնակչությունն աճի այնպիսի տեմպեր ընդունեց, որ սարսափեցրեց ժողովրդագրությամբ զբաղվող շատ մասնագետների: Նրանց կարծիքով՝ եթե ժողովրդագրական խնդիրները չլուծվեն, ապա այլևս ոչ մի խնդիր չի լուծվի: Աշխարհի բնակչության աճի շարժընթացը պատկերացնելու համար էքսկուրս կատարենք հազարամյակների միջով: 16 հազար տարի առաջ մարդկության թիվը 3 միլիոն էր, 100 քառակուսի կիլոմետրի վրա ապրում էր 8-10 մարդ: 5-4 հազար տարի առաջ երկրագնդի բնակչությունը 25 մլն էր, 3 հազար տարի առաջ՝ 50 մլն10: Մեր թվարկության 19 դարերի ընթացքում երկրագնդի բնակչությունն աճել է 9,6 անգամ, առաջին 15 դարերի ընթացքում՝ 2.5, իսկ հետագա 4 դարերի ընթացքում՝ 3.8 անգամ: Եղել են ժամանակաշրջաններ, երբ բնակչությունն ընդհանրապես չի աճել, օրինակ՝ 200–400 թթ. (բնակչության քանակը մնացել է 190 մլն), 1200–1300 թթ. (360 մլն), 1600–1650 (545 միլիոն): Աշխարհի բնակչությունը 1 միլիարդի հասավ 1820 թ., 2 միլիարդի՝ 1927 թ., 3 միլիարդի՝ 1959 թ., 4-ի՝ 1974 թ., 5-ի՝ 1987 թ., 2016 թ. երկրագնդի բնակչությունը հասավ 7.4 միլիարդի: Գնալով բնակչության աճի տեմպերն արագանում են, 13 տարին մեկ աշխարհի բնակչության թիվը 1 միլիարդով աճում է: Մինչև XX դարի սկիզբը բնակչության աճի շարժընթացը հետևյալն է՝ Երկրագնդի վրա բնակչությունը հավասարապես չէ բաշխված: Ցամաքի 7%-ում կենտրոնացած է բնակչության 70%-ը, 4/5 մասն ապրում է հարթավայրերում և ոչ բարձր բարձրավանդակներում, ծովի մակերևույթից մոտ 500 մետր բարձրության վրա՝ 27.8% տարածքում: Շատ են նաև 1000 մետր բարձրության վրա ապրողները, իսկ ավելի բարձր վայրերում տեխնիկան չի աշխատում, կամ ծովից հեռու է: Ծովեզերքի հողը ավելի հարմար է գյուղատնտեսական աշխատանքների համար: Անհավասարաչափ է բաշխված նաև բնակչության խտությունը: Ամենախիտ բնակեցված աշխարհամասը Եվրոպան է, Եվրոպայում՝ Նիդեռլանդները՝ 352 մարդ 1 կմ2-ի վրա (Բելգիայում՝ 323, Մեծ Բրիտանիայում՝ 228): Նման խտություն դիտվում է նաև Ասիայում, բայց գյուղական միջավայրում: Գյուղացիական բնակչության խտությունն այստեղ 2.5

անգամ ավելի է, քան Եվրոպայում: Ասիայում է կենտրոնացած երկրագնդի գյուղական բնակչության 71%-ը: Բնակչության ամենամեծ խտությունն ունի Բանգլադեշը՝ 657 մարդ 1 կմ2-ի վրա, Ճապոնիան՝ 321, Լիբանանը՝ 253, Շրի Լանկան՝ 235, Հնդկաստանը՝ 218, մինչդեռ, Մոնղոլիան՝ 1.2, Սաուդյան Արաբիան և Օմանը՝ 5 մարդ: Աստիճանաբար փոխվում է քաղաքային և գյուղական բնակչության շարժընթացը: Քաղաքային բնակչության խտությունը աճում է, գյուղականինը՝ նվազում, բացառությամբ մի քանի երկրների, որոնց թվում են Հնդկաստանը, Բանգլադեշը: XX դարի սկզբին քաղաքներում ապրում էր բնակչության 10%-ը, 1940 թ.՝ 25%-ը, 1950 թ.՝ 29%-ը, 1983 թ.՝ 40.5%-ը: Ասիական տարածքի քաղաքային բնակչության բաժինն աճել է մոտավորապես 0.4%-ով: 1950-1983 թթ. քաղաքային բնակչությունն աճել է 2.6 անգամ՝ 730 միլիոնից հասնելով 1895 միլիոնի, նույն ժամանակահատվածում գյուղական բնակչությունը 797-ից աճել է 2749 միլիոնի: Որոշ վայրերում նույնիսկ նվազել է: Վերջին 30 տարիների ընթացքում յուրաքանչյուր տարի քաղաքաբնակ է դառնում 50 միլիոն մարդ, իսկ գյուղաբնակների թիվը կազմում է 25 միլիոն: Բնակչության աճի մեծ բաժինը հասնում է զարգացող և չզարգացած երկրներին: 1950-ական թթ. այդ երկրներն ապահովել են բնակչության աճի 78.8%, 1960 թ.՝ 83.8%, 1970 թ.՝ 87.8%, 1980 թ.՝ 91.8%: 1985 թ. Եվրոպայի և Աֆրիկայի բնակչության ընդհանուր թիվը յուրաքանչյուրում 480 միլիոն էր: Ըստ կանխատեսումների՝ 2025 թ. Աֆրիկայում կապրի 1.5 մլրդ մարդ, մինչդեռ Եվրոպայում՝ 512 մլն: Այստեղից էլ կարևորագույն հարցերից մեկը՝ ինչպե՞ս է զարգացման ցածր մակարդակ ունեցող երկիրը լուծել բնակչության արագ աճի խնդիրը: Ժամանակին այդ հարցի պատասխանը տվել է Թ. Մալթուսը՝ սով, գոյության կռիվ, սոցիալական բախումներ, պատերազմներ, հիվանդություններ, որոնք նվազեցնում են բնակչության քանակը11: Եվրոպական երկրներում (Ավստրիա, Բելգիա, Շվեդիա, Դանիա) դիտվում է բնակչության բացարձակ նվազում: Այս երկրներում բնակչության աճը պայմանավորված է հիմնականում ներգաղթյալներով: Արևմուտքում ծնելիության տոկոսն ամենացածրն է, այն ցածր է նաև Ռուսաստանում: Անհավասարաչափ ծնելիության պատճառով Արևմուտքը ծերանում է, Արևելքը՝ գերհագենում: Ասիայում ժողովրդագրական պայթյուն է: Մինչև XIX դարի 30-ական թթ. Արևմուտքն ավելի արագ է աճել, հետո վիճակը փոխվել է: Չզարգացած երկրներում, չնայած կյանքի վատ պայմաններին, բնակչությունը շարունակում է աճել, որը պայմանավորված է մի շարք գործոններով. 1. Տնտեսական՝ գյուղատնտեսությունը հենված է ձեռքի աշխատանքի վրա, ուստի աշխատող ձեռքի կարիք է զգացվում:

2. Համաճարակների և հիվանդությունների հետևանքով մահացության տոկոսը մեծ է: Մտայնություն կա, որ շատ երեխաներ ունենալու դեպքում փրկվողներ էլ կլինեն, ծերության օրերին խնամող կունենան: 3. Ավանդույթը և հարգալից վերաբերմունքը բազմանդամ ընտանիքների նկատմամբ: 4. Ընտանիքի պլանավորման պետական քաղաքականության բացակայությունը կամ թույլ ազդեցությունը: 5. Հասարակական

աշխատանքից, կարիերայից կնոջ դուրս մնալը: 6. Բազմամայրության երևույթը12: Այսօր աշխարհում ընտանեկան քաղաքականության երկու իրարամերժ տեսակետ գոյություն ունի. 1. Երկրի գերբնակեցումը կարող է հանգեցնել ռեսուրսների պակասի և գլոբալ բնապահպանական աղետի: Ուստի, պետք է հսկողություն իրականացնել ծնելիության վրա: 2. Ծնելիությունը բնական երևույթ է, որի վրա հսկողություն իրականացնել չի կարելի: Զարգացած երկրներում պատկերն այլ է: Այստեղ ուշ են ամուսնանում, կանայք ներգրավված են հասարակական աշխատանքում, սոցիալապես ակտիվ են, երեխաներով ավելի շատ են զբաղվում, գնալով նվազում է մանկական մահացությունը, բուժսպասարկումը համեմատաբար բարձր մակարդակի վրա է, դրան ավելացնենք ֆեմինիզմի երևույթը և այլն: Այստեղից էլ զարգացման ցածր մակարդակում գտնվող կամ զարգացող երկրներից բնակչության արտագաղթը զարգացած երկրներ, հիմնականում՝ Արևմտյան Եվրոպա: 2015 թ. աշխարհում տեղահանվել է 65,3 մլն մարդ (ՄԱԿ-ի տվյալներ): 2016 թ. մի քանի ամիսների ընթացքում 200 հազար փախստական զանազան ճանապարհներով ներգաղթեց Եվրոպա: Արևելքի ներխուժումն Արևմուտք, ժողովրդագրական մեծ տեղաշարժերը բազմաթիվ հիմնախնդիրներ են առաջացնում հենց Արևմուտքի համար: Ներգաղթյալները չեն հարմարվում եվրոպական արժեքներին, շարունակում են հավատարիմ մնալ իրենց ավանդույթներին, կենցաղին, դառնում են ներծին (էնդոգեն) հասարակություն՝ իրենց վարքուբարքով: Ընթացս աճում են հասարակական լարվածությունը, հանցագործությունների քանակը, ահաբեկչությունը (2016-2017 թթ.՝ Փարիզում, Բրյուսելում, Սանկտ Պետերբուրգում, Բեռլինում, Բարսելոնում և այլուր): Փոխվում է Եվրոպայի մարդաբանական տիպը, ժողովրդագրական իրավիճակը, դավանանքը: Ներկայացնենք որոշ փաստեր, որոնցում ժողովրդագրական բնույթի հետաքրքիր տվյալներ են:

Բնակչությունը ըստ երկրների (2009 թ. տվյալներ)

1. Չինաստան 1.345.8
2. Հնդկաստան 1.198.0
3. ԱՄՆ 314.7
4. Ինդոնեզիա 230.0
5. Բրազիլիա 193.7
6. Պակիստան 180.8
7. Բանգլադեշ 162.2
8. Նիգերիա 154.7
9. Ռուսաստան 140.
9 10. Ճապոնիա 127.2

Բնակչության ամենաարագ աճ ունեցող երկրները 2005-2010 թթ. (միջին տարեկան աճը %-ով)

1. Կատար 15.24
2. Արաբական Միացյալ Էմիրություններ 12.26
3. Բահրեյն 11.09
4. Լիբերիա 4.54

5. Քուվեյթ 3.79

6. Նիգերիա 3.54

7. Սինգապուր 3.52

8. Ուգանդա 3.24

9. Էրիթրեա 3.16

10. Մալի 3.08

բ) Ժողովրդագրական իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում Ինչպիսի՞ն է ժողովրդագրական իրավիճակը ՀՀ-ում: Խորհրդային Միության տարիներին (1921-1991) մեր հանրապետության բնակչության թիվն աճեց 5 անգամ, այդ թվում՝ քաղաքային բնակչությունը՝ 14.1 անգամ, գյուղականը՝ 1.5: 1992 թ. տվյալներով Հայաստանի մշտական բնակչության թիվը 3 մլն 633.3 հազար մարդ էր, 2016 թ. հունվարի 1-ի տվյալներով՝ 2 մլն 998.8 հազար (նվազել է 17.5 %-ով): Ըստ վերլուծաբանների՝ 1992 թվականից սկսած՝ Հայաստանը լքել է 1 մլն 250 հազար մարդ, յուրա քանչյուր տարի՝ 30 հազար: Արտագաղթի նման տեմպերը պահպանելու դեպքում 90 տարի հետո Հայաստանում հայ չի մնա: 2001-2011 թթ. մարդահամարների միջև ընկած տասնամյակում Շիրակի և Լոռու մարզերում բնակչության թիվը պակասել է 50.8 հազար մարդով: Քաղաքային բնակչության ծնելիությունը վերջին 25 տարիներին նվազել է 2.5, իսկ ամուսնությունների քանակը՝ 3 անգամ: 1000 մարդու հաշվարկով մահացածների թիվը 1987 թ. 5.3 մարդ էր, 2014 թ.՝ 9.2: Տարեցտարի պակասում է տղամարդկանց քանակը, որը հետևանք է նաև հղիության արհեստական ընդհատումների (սեռով պայմանավորված): Այդ երևույթը տարածված է հատկապես Շիրակի և Գեղարքունիքի մարզերում, որոնցում սեռային տարբերությունները հսկայական են, և տարիներ անց ժողովրդական բնույթի լուրջ խնդիրներ են առաջացնելու: Բնակչության թվի նվազման շուրջ կեսը բաժին է ընկնում ակտիվ վերարտադրության տարիքային խմբին, որի պատճառը արտաքին միգրացիան է: Առաջիկա 5-10 տարիների ընթացքում Հայաստանից կարող է արտագաղթել 300-400 հազար մարդ: Հայկական սոցիոլոգիական ասոցիացիայի տվյալներով՝ 2013 թ. մայիսի 15-25-ն ընկած ժամանակահատվածում Երևանում 1000 հարցվածի 46%-ը նշել է, որ ցանկանում է հեռանալ Հայաստանից: Հեռանալու մտադրության մասին հայտնել է տղամարդկանց 50%-ը, 18-29 տարեկան երիտասարդների 52%-ը: Արտագաղթի դրդապատճառների մեջ առանձնացվել են. ա) աշխատանք չկա՝ 31%, բ) հեռանկար չկա՝ 29.6%, գ) արդարություն չկա՝ 19.3%, դ) ապրուստ չկա՝ 17.2%: Փաստորեն, հարցվածների 48.9%-ի՝ երկրից հեռանալու պատճառը սոցիալ-տնտեսական չէ, այլ հեռանկարի և արդարության բացակայությունը: Իսկ մի՞թե ողբերգություն չէ, որ մարդն արդարություն ու հեռանկար է որոնում հայրենիքից դուրս: Զավեշտն այն է, որ հարցվածների 82.3%-ը իրեն համարում է հայրենասեր, 69.8%-ը՝ երջանիկ: Կարևոր գործոն է նաև ազգային գաղափարի առկայությունը կամ բացակայությունը (Հանուն ինչի՞ մնան, հա- նուն

հայրենիքի՝ այո՛, հանուն բնակավայրի՝ ո՛չ: Դիտվում է իդեալների, արժեքների, գաղափարախոսության պակաս): ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հաշվարկներով՝ 2025- 2030 թթ. Հայաստանում կարող է լինել ընդամենը 1.5-2 միլիոն բնակչություն: Հեռացողների տարիքը տատանվում է 18-55-ի միջակայքում, որը երկիրը զարգացնող հիմնական զանգվածն է: Մնացել են հոգատարության կարիք ունեցողները՝ 550.000 թոշակառու, 600.000 տնային տնտեսուհի, 450.000 անչափահաս, որոնցով երկիր չես զարգացնի: Խորհրդային շրջանի հետ համեմատած՝ ծնելիությունը երկու անգամ նվազել է, մահացությունը՝ աճել, ժողովուրդը՝ ծերացել14: Ամենավերջին տվյալներով՝ թեև արտագաղթողների թվաքանակը 2017 թ. (37 հազար), 2016 թ. համեմատությամբ (55 հազար), մի փոքր նվազել է, այնուամենայնիվ, խնդիրը շարունակում է մնալ չլուծված և հրատապ: Ազգային վիճակագրական ծառայության հրապարակած տվյալների համաձայն՝ 2017 թ. Հայաստանում գրանցվել է 37 699 ծնունդ, որը 2893-ով պակաս է 2016 թ. ցուցանիշից: Այսօրվա արտագաղթը բազմաթիվ գծերով տարբերվում է մինչև խորհրդային կարգերի հաստատումը դիտված գաղթականությունից և խորհրդային շրջանի «խոպանչիությունից»: Մինչև խորհրդային կարգերի հաստատումը հայրենիքից հեռացել են օտարի լծից ազատվելու համար, հեռացել են նախարարական տները, մտավորականները և ունևոր խավը: Բնակչության բացարձակ մեծամասնությունն ապրել է հայրենիքում: Պատկերը փոխվել է Եղեռնից հետո: Խորհրդային իշխանության օրոք արտագաղթ, ըստ էության, չկար, հեռանալու ձգտումը տարածված էր հայրենադարձների և այլախոհների շրջանում և նկատելի դարձավ միայն այդ իշխանության վերջին տարիներին: Բուն ԽՍՀՄ-ի ներսում դիտվող երևույթը «խոպանչիությունն» էր, երբ տղամարդիկ գնում էին ժամանակավորապես (գարնանը գնում էին, աշնանը՝ վերադառնում)՝ գումար վաստակելու և կենսական խնդիրներ լուծելու համար (բնակարան կառուցել, ամուսնանալ, առանձին ընտանիք ստեղծել) և այլն: Նրանց նկատմամբ առանձնապես լուրջ վերաբերմունք էլ չկար, որի արտահայտությունը «խոպանչի» անվա նումն էր: Այժմ ձևավորվել է «խոպանչիության» անբարոյական ձևը, երբ կինն է մեկնում արտագնա աշխատանքի և նույնիսկ՝ Թուրքիա: Բացի դրանից, եթե նախկինում, ինչպես նշվեց, տղամարդը արտագնա աշխատանքի էր մեկնում գումար աշխատելու և կենսական հարց լուծելու համար, ապա վերջին 20-25 տարիների ընթացքում հեռանում են ընտանիքներով՝ այլևս չվերադառնալու մտադրությամբ: Ներկայիս արտագաղթը զանգվածային փախուստ է մեր ստեղծած հայրենիքից, մեր իշխանություններից, հանրապետությունում տիրող բարոյահոգեբանական մթնոլորտից, անօրինականությունից, սոցիալական թշվառ վիճակից*: Սա բողոքի սոցիալական, քաղաքական և բարոյահոգեբանական ձև է, բայց անընդունելի, որովհետև դրանով խնդիրը չենք լուծում, փոխարենը՝ եթե դեմը չառնվի, ինչպես վերևում նշեցինք, կործանելու ենք երկիրը, ինչը սրբապղծություն է հայրենիքի ու հայրենի հողն իրենց արյամբ շաղախած մարդկանց հիշատակի նկատմամբ: Այս արտագաղթը կենսական հանգամանքներին չդիմադրելու կամ դիմադրելու

ցանկության պակասի հետևանք է, և ոչ մի ժողովուրդ այս ճանապարհով ուժեղ պետություն և ապահով հայրենիք չի ստեղծել: Շատ հետազոտողներ պնդում են, որ այս երևույթի անվանումը «արտագաղթ» չէ, այլ «փախուստ»: Նույնիսկ մշակվում է «փախուստի» փիլիսոփայություն15: Թեև ընթացքում արդեն նշվեցին արտագաղթի պատճառները, այնուամենայնիվ, փորձենք առանձնացնել հիմնականները. 1. Սոցիալ-տնտեսական: Խորհրդային իշխանության տարիներին Հայաստանը ծաղկուն և հզոր արդյունաբերական երկիր էր, որից հետո արդյունաբերությունը դադարեց գործելուց, զանգվածային դարձավ գործազրկությունը, հանրությունը հայտնվեց խորագույն սոցիալական-տնտեսական ճգնաժամի մեջ, համատարած դարձան սոցիալական թշվառությունը, սովը, մութն ու ցուրտը, որոնք արտագաղթը սնող ամենահիմնական գործոններն էին:

Ժողովրդագրական խնդիրները և պանդեմիան



Այսօր համամոլորակային հիմնախնդիրներն ուղեկցում են մեզ ամեն քայլին: Մարդկության համար ամենահրատապ խնդիրներից է ժողովրդագրական հիմնախնդիրների լուծումը: Ինչու՞մ է դա կայանում: Համաշխարհային ժողովրդագրական հիմնախնդիրը բաղկացած է 3 մասից:

- Զարգացող երկրներում բնակչության արագ աճի հետևանքով առաջացած ժողովրդագրական հիմնախնդիրը (աֆրիկյան, ասիական և լատինաամերիկյան որոշ երկրները ավելի ու ավելի քիչ են կարողանում իրենց բնակչությանը տրամադրել անհրաժեշտ սնունդ, նյութական հարստություն, ապահովել հիմնական կրթություն և ստեղծել աշխատավայրեր):
- Զարգացած և անցումային տնտեսություն ունեցող երկրների բնակչության ծերացման, ծնելիության մակարդակի իջեցման հիմնախնդիրը:
- Թույլ զարգացած երկրներում հարյուր միլիոնավոր մարդկանց մշտական թերսնման և սովի հետ կապված պարենային հիմնախնդիրը:

Տարբեր երկրներում սկսեցին մշակվել ժողովրդագրական խնդիրները կարգավորող տարբեր միջոցառումներ: Հայաստանի Հանրապետությունում ևս շրջանառության մեջ են դրվել ժողովրդագրական իրավիճակի բարելավման ծրագրեր: Սակայն ընդունված հայեցակարգերը բավարար արդյունք չեն ապահովում, իսկ կյանքը ցույց է տալիս, որ հստակ ժողովրդագրական քաղաքականության բացակայությունը կարող է խիստ բացասական հետևանքներ ունենալ Հայաստանի նման փոքր երկրի համար, որը գտնվում է անկայուն աշխարհաքաղաքական գոտում, ունի ներքին և արտաքին բազմաթիվ լուրջ մարտահրավերներ:

Պանդեմիան և ժողովրդագրական խնդիրները:

Շատ գիտնականներ առաջ են քաշում այն ենթադրությունը, որ նոր կորոնավիրուսի տարածումը շատ խնդիրների լուծման եղանակ է: Ըստ իս՝ հիվանդության տարածումը փոխում է կյանքը մոլորակի վրա: Բնապահպանական տեսանկյունից՝ աշխարհում շարժումը կանգ է առել՝ բնությունը վերականգնվում է: Վենետիկում բադերը և խոզերը շրջում են փողոցներով, Չիկագոյոյի օկեանարիումներում քայլում են պինգվինները: Օդը զգալիորեն մաքրվում է: Դեմոգրաֆիական տեսանկյունից՝ ըստ

իսրայելցի մասնագետի Չինաստանի Ուհան քաղաքի լաբորատորիաները ներգրավվել են կենսաբանական զենքի մշակման մեջ՝ Չինաստանում ժողովրդագրական իրավիճակը լուծելու համար:

Գաղտնիք չէ, որ երկրագունդը գերբնակեցված է, որ ռեսուրսները չէին բավականացնելու հետագա սերունդներին: Ամեն տարածաշրջան ուներ իրեն բնորոշ ժողովրդագրական խնդիրները: Չինաստանում ծնելիությունն էր մեծ, Եվրոպան՝ ծերանում էր: Ինչու՞ Իտալիան կաթվածահար եղավ, իսկ Շվեդիան արտակարգ իրավիճակ չի հայտարարում: Պատասխանն ակնհայտ է: Իտալացիներն ու իսպանացիները հայտնի են իրենց տաքարյունությամբ, մեծ ու ջերմ ընտանիքներով, մեծահասակներին այցելությունների հետաքրքիր ավանդույթներով, իսկ Շվեդները՝ հյուսիսի այդ սառը ժողովուրդը, սիրում են տարբերվել: Բավական է ասել, որ թեև վաղուց արդեն Եվրամիության անդամ են, բայց մինչև հիմա պահպանել են իրենց ազգային տարադրամը՝ կրոնան: Իսկ Շվեդիան գիտե՞ք ինչ է ներմուծում: Աղբ, սովորական աղբ: Այո՛, այո՛: Շվեդները ոչ միայն իրենց աղբի 99 տոկոսն են վերամշակում, այլև աղբ են ներմուծում հարևան Նորվեգիայից և Ֆինլանդիայից: Վերամշակում են, վառելիք են ստանում և վաճառում: Շվեդ ժողովուրդը, ի տարբերություն հարավի, մեծ ընտանիքներ չունեն, միայնակ են ապրում, չափից շատ օրինապաշտ են ու պահպանում են անվտանգության բոլոր կանոնները: Այսպիսի տարբերություն Եվրոպայի հյուսիսի ու հարավի միջև, այն ինչ, Եվրոպական երկրների միջև սահմաններ չկան ու շատ ընդհանրություններ ունեն:

Մեկ այլ խնդիր, որ լուծվեց պանդեմիայի օրերին: Թուրքիան սպառնում էր Եվրոպային, որ բացելու է իր սահմանները ու թույլ տա սիրիայից ներգաղթյալների հոսքը դեպի Եվրոպա:

Հայտնի են Բիլ Գեյթսի՝ աշխարհի գերբնակեցման ու դրանից բխող խնդիրների դեմ պայքարի ոչ հումանիստական մեթոդները:

Հայտնի է նաև այն, որ ամենուր խախտվում էին Կայուն զարգացման նպատակները: Մի խոսքով ենթադրություններն ու կասկածները շատ են ու տարբեր, բայց մենք

բոլորս պետք է խելամիտ օգտագործենք մեզ տրված հնարավորությունները, միավորվենք համաշխարհային հասարակության հետ ու քայլ առ քայլ մոտենանք այն կետին որտեղ մոլորակի ու մարդկանց շահերը համընկնում են: Իսկ ժողովրդագրական խնդիրները ինչ ուղղությամբ կգնան՝ լուծման, թե լճացման պետք է ճիշտ ընտրություն կատարել ազգայնական մեկուսացման և գլոբալ համերաշխության միջև:

Աշխարհի գերբնակեցման գլոբալ հիմնախնդիր

Աշխարհի բնակչության աճի գլոբալ հիմնախնդիրը ժամանակակից քննարկման առանցքային ուղղություններից մեկն է: Աշխարհի բնակեցման խնդիրներն ուսումնասիրող տեսաբանների մի խումբ կարծում է, որ եթե խափանվի բնակչության աճի արհեստական սահմանափակման գլոբալ ծրագիրը, ապա մարդկությունը կկանգնի շրջակա միջավայրի հետ կապված մի շարք խնդիրների ծագման վտանգի առջեւ, ինչը կարող է աղետալի հետեւանքներով հղի լինել: Քննադատների մեկ այլ խումբ հերքում է երկրագնդի գերբնակեցմանն առնչվող այս տարակույսները եւ չի պահանջում բնակչության վերահսկման կտրուկ միջոցներ: Մինչ բնակչության թվաքանակի տատանումները իրենց ազդեցությունն են թողնում առողջապահության գրեթե բոլոր ոլորտների վրա, բիոէթիկայի ոլորտի ուսումնասիրողները առայժմ սեւեռուն ուշադրության չեն արժանացրել այս հիմնախնդիրները:

Երկրագնդի գերբնակեցման հիմնախնդրին առնչված քննարկման նախակարապետ կարելի է համարել Թոմաս Մալթուսին: 1798թ.-ին Մալթուսը հայտնեց իր վարանումը այն խնդրի շուրջ, որ եթե մարդ արարածը կենդանական այլ տեսակների պես բազմանալով հագեցնի իր բնակեցրած աշխարհի մակերեսը, ապա կարող է կործանման առջեւ կանգնել: Տեսությունը պարզ է. երբ մարդիկ ունենան ավելի շատ երեխաներ, ովքեր իրենց մահվանից հետո պետք է լրացնեին մարդկության շարքերը, ապա մի քանի սերունդ անց աճի ցուցիչը թվաբանականից կդառնա երկրաչափական: Մինչ այդ, մարդկությանը երկրագնդի պարգեւած սննդային, էներգետիկ եւ հանքային ռեսուրսները սահմանափակ են եւ իրենց հերթին մշակման եւ արդյունահանման ծավալների պարբերական ավելացման կարիք են զգում: Մալթուսյան տեսության համաձայն՝ նման գերհագեցումը կարող է մարդկությանն ամբողջական վերացման կամ ետընթացի տանել: Այժմ մեր շրջակա աշխարհում տարածված սովի եւ համաճարակների խթանիչ կարեւոր գործոններից են բնակչության ցածր կենսամակարդակը, գաղթային տեղաշարժերը, որոնք անուղղակիորեն եւ չափազանց դրամատիկ կերպով հանգեցնում են բնակչության մեծածավալ կորուստների:

Ք.ա. X հազարամյակում երկրագնդի բնակչության թվաքանակը գտնվում էր 2-ից 20 միլիոնի միջակայքում, Փրկչական 1 թվականին այն կազմում էր քառորդ միլիարդ, 1600թ.-ին աշխարհի բնակչությունն արդեն կես միլիարդ էր, այս թիվը

կրկնապատկվում էր ավելի ու ավելի արագ՝ նախ 1800, ապա 1930թ.-ին: Եվ զուր էր 1968թ.-ին Պոլ Էհրլիխի հրապարակած՝Բնակչության պայթյուն՝գրքի հնչեցրած համաշխարհային ահազանգը, քանի որ 1959թ.-ից 1999թ.-ն ընկած միջոցում երկրագնդի բնակչությունը 3 միլիարդից հասել էր 6-ի: Այդ տարիներին կատարված գիտական հաշվումները մարդկության 7-րդ միլիարդի նշաձողի հաղթահարումը զետեղում էին 2010-2015թթ.-ի միջակայքում, ինչը արդեն տեղի ունեցավ մերձավոր անցյալում:



Ընտանիքի պլանավորման ծրագրերի եւ կանխարգելիչ միջոցների տարածման շնորհիվ՝ բնակչության աճի տեմպերը նկատելիորեն զսպվել են աշխարհի շատ տարածաշրջաններում, հատկապես՝ զարգացած երկրներում եւ հասարակության ընկալումն այժմ այնպիսին է կարծես՝բնակչության պայթյունն՝արդեն հաղթահարված է: Սակայն մեր պայմաններում փոքր աճը նույնպես նշանակալի թիվ է իրենից ներկայացնում եւ ներկայիս մանուկների սեռական հասունացման հասնելուն պես պայթյունը կարող է կրկնվել: Բնակչության թվաքանակի կանխատեսումը 2050թ.-ի համար 7,78 միլիարդի կարգի մեծություն է, թեեւ աճի նախկին տեմպերի պահպանման դեպքում այն կարող էր հասնել 9-ից 11 միլիարդի:

Դառնալով Մալթուսին, պետք է փաստենք, որ ինքն անձամբ բնակչության աճի սահմանափակման ծրագրերի կողմնակից չէր, այլ կարծում էր, որ բարոյական զսպվածությունն ու ողջախոհությունը կնպաստեն վիճակի շտկմանը, թեեւ հոռետես լինելով պնդում էր, որ մարդկային ցեղը, ինչպես եւ ցանկացած այլ արագ բազմացող կենդանական տեսակ՝ գտնվում է թվային-տարածքային ընդարձակմամբ եւ

ետընթացով հերթափոխվող շրջապտույտի մեջ: Իսկ Պոլ Էհրլիխին հետեւող, այսպես կոչված, նորմալթուսյանները՝ ետընթաց ասելով նկատի ունեն մարդկային բազմամիլիոնավոր կյանքերի տառապալից եւ ամայեցուցիչ կորուստներ: Շատ գիտնականներ զգուշանում են, գուցե այս կտրուկ միջոցներ ձեռք առնելուն միտված ուղղությունը տիրապետող դառնա եւ վերածվի բնակչությունը սահմանափակելու անզուսպ մոլուցքի:

Բնակչության աճի տեմպերի զսպման եւ ընտանիքի պլանավորման ծրագրերը մեկնարկեցին 1960-ականների կեսերին, մոտ 200 երկրներում՝ առավել կամ նվազ արդյունավետությամբ: Որոշ տարածաշրջաններում դրանք չափազանց ագրեսիվ կերպարանք էին ստանում, ինչպես օրինակ՝ Հնդկաստանում վասեկտոմիայի (ամլեցման տեսակ է, որի ժամանակ վիրահատական եղանակով խցանվում կամ հատվում են սեռական ուղիները) խրախուսման ծրագիրը կամ Չինաստանում միակ զավակ ունենալու սահմանափակումը: Վաղ շրջանում առաջ քաշված ծրագրերում նախընտրությունը տրվում էր երկարաժամկետ կամ իսպառ երկսեռ ամլեցմանը, իսկ նորագույն փուլում մոտեցումները վերանայվել են եւ խրախուսվում է դարձելի ամլեցման միջոցների (պահպանակներ, դեղահաբեր) օգտագործումը, վերմաշկային փակցման համար նախատեսված սպեղանիների, ներարգանդային պաշտպանական մեխանիզմների, ներմաշկային իմպլանտների, հեշտոցային մոմիկների եւ կարգավորիչ այլ միջոցների կիրառումը՝ նպատակ ունենալով կասեցնել անընդհատ որդեծնությունը, երկարաձգել հղիությունների միջեւ ընկած տեւողությունը եւ նվազեցնել ընտանիքի կազմը: Նման ծրագրերը հանդիպում են ընդդիմադիր երեք հիմնական խմբերի քննադատությանը:

Կրոնական քննադատության մեջ առավել բարձր հնչում է Կաթոլիկ Եկեղեցու եւ Իսլամի հետեւորդների ձայնը: Երկու կրոնական ուղղություններ, որոնք սկզբունքորեն դեմ են բնական աճի սահմանափակումներին, սակայն տարբեր հիմնավորմամբ. Կաթոլիկ Եկեղեցին հիմնում է իր տեսությունը Ծննդոց 38-րդ գլխի վրա եւ հատկապես դեմ է կանխարգելիչ միջոցների օգտագործմանը, իսկ Իսլամի հետեւորդները որդեգրել են ծնելիության խթանման քաղաքականություն եւ ուզում են ընտանիքները բազմանդամ տեսնել: Կաթոլիկ ուսուցման համաձայն՝ սեռական հարաբերությունը թույլատրելի է միայն ամուսնական զույգի միջեւ, որը պետք է ‘միասնական եւ արարիչ լինի՝ այսինքն սեռական յուրաքանչյուր հարաբերություն նոր կյանքի սկիզբ է դնում’ (Պողոս VI, 1968թ.): Արհեստածին կանխարգելման բոլոր եղանակների կիրառումը արգելվում է եւ նույնացվում ամլեցման հետ: Կաթոլիկների համար թույլատրելի է միայն ‘ընտանիքի բնական պլանավորումը’, որի դեպքում օրգանիզմի ռիթմերի պարբերականության վրա հիմնված մեթոդ է կիրառվում (բեղմնավորման օրերի որոշում օրացուցային նշումների, ջերմաստիճանի չափման եւ արտաքին սեռական օրգանների զննման միջոցով): Իհարկե այս մեթոդը լիովին կիրառելի է ամուսնական զույգի երկկողմ համաձայնության եւ սեռական հարաբերությունների չափավորության պարագային:

"Humanae Vitae" (‘Մարդկային կյանքը’) շրջաբերականում պարունակվող ուսուցումը (նկատեք՝ ուսուցման, որի անսխալականությունը չի հայտարարվել, եւ ոչ վարդապետության), որը ազդարարվեց 1968թ.-ին, եկեղեցական դիրքորոշմանն ընդդիմադիր հոգեւորականության շարքերում աստվածաբանական զայրույթի միամյակ առաջացրեց: Ինչեւէ, Լատինական Ամերիկայում, Ֆիլիպիններում հանրությունը հեշտությամբ ընդունեց Եկեղեցու հրահանգները, ընտանիքի պլանավորման ծրագրերը, աբորտը, ամլեցումն ու հղիության կանխարգելիչ

միջոցները արգելվեցին կամ դժվար հասանելի դարձվեցին իշխանությունների կողմից: Սակայն ԱՄՆ-ում եւ Արեւմտյան Եվրոպայում այս ուսուցումն առավելաբար անտեսվեց: Վիճակագրորեն կաթոլիկ կանայք միեւնույն հաճախականությամբ են օգտագործում կանխարգելիչ միջոցներ, ինչ այլ դավանանքի հետեւորդները: Բայց Կաթոլիկ Եկեղեցու ընդդիմությունը դեռեւս կարեւոր դեր է կատարում հանրային կարծիքի ձեւավորման մեջ. այս կառույցը իշխանական լծակների միջոցով խափանում է ընտանիքի պլանավորման ծրագրերի ֆինանսավորումը եւ պարբերաբար ուշադրություն է հրավիրում միջոցների անհավասարաչափ բաշխման, պետությունների անհամեմատելի զարգացման մակարդակների հիմնախնդիրների վրա, տնտեսական ապօրինությունների մեջ տեսնելով հասարակության նեղ պայմանների պատճառը:

Իսլամի հետեւորդները նույնպես կողմնակից են ՝բնական կանխարգելման միջոցների՝ կիրառմանը, ինչը հաստատվում է Մարգարեների պատվերով, որը տղամարդկանցից պահանջում է պարբերական հրաժարում սեռական ակտիվությունից: Որոշ կրոնական հեղինակություններ թույլատրում են ժամանակակից կանխարգելիչ միջոցների օգտագործումը, ոմանք՝ մերժում, երբեմն էլ որոշման կայացման իրավունքը թողնվում է ամուսնական զույգին: Սերմնասպանիչ միջոցները, դեղահաբերը եւ այլ հորմոնային միացություններ կարող են թույլատրելի համարվել, եթե հիմնովին ապացուցվի կանացի առողջության համար դրանց անվնաս լինելը: Որոշ իսլամական երկրներում (Իրան, Թուրքիա, Թունիս, Բանգլադեշ, Ինդոնեզիա) ընտանիքի պլանավորման ծրագրերը բավական հաջող են գործում՝ սահմանափակելով ընտանիքի անդամների թիվը, իսկ Միջին Արեւելքի երկրներում հանրությանը կանխարգելիչ միջոցների ներկայացման ոչ կառավարական ծրագրերի մեկնարկը նոր է դրված: Ըստ որում՝ ընտանիքի պլանավորման եւ կանխարգելիչ միջոցների օգտագործման առաջարկը հիմնականում տղամարդկանց է ուղղվում, քանի որ նման հասարակության ներսում վերարտադրողական ընտրության իրավունքը վերապահված է տղամարդուն: Եվ Քրիստոնեության եւ Իսլամի հետեւորդների պարագային պարզ է միայն մեկ բան, որ կրոնը որոշիչ դերակատարություն ունի սեռական վարքագծի կերտման եւ ընտանիքի ձեւավորման հարցերում:

Քննադատների մեկ այլ խումբ են կազմում ֆեմինիստ մտածողները, որոնց համար խնդրահարույց են հայրիշխանական հասարակություններում կանանց ենթակա եւ ընտրությունից զուրկ կարգավիճակը, սոցիալապես կախյալ դրությունը, հաճախ կրթությանն ու ժամանակակից բժշկությանը անհաղորդ լինելը: Մասնավորապես, ֆեմինիստ քննադատները շեշտում են բնակչության աճի վերահսկման ծրագրերում կանանց վերարտադրողական իրավունքների ոտնահարման փաստերը, երբ կանանց հղիությունից բռնի կանխարգելում կամ ամլեցում է պարտադրվում: Իգական սեռի հանդեպ աղաղակող ոտնձգություններ էին կատարվում, օրինակ՝ Չինաստանում, որտեղ որդեգրված է միակ երեխայի քաղաքականությունը (որը ուժի մեջ կլինի առնվազն մինչեւ 2015թ.). շատերը ցանկանալով միայն արու զավակ ունենալ՝ արհեստական վիժեցման էին դիմում: Եւս մեկ պահանջ, որ ներկայացնում են ֆեմինիստ քննադատները՝ դա կանխարգելիչ դեղորայքի պարտադիր բժշկական թեստավորման անցկացումն է՝ այն կանանց համար անվտանգ դարձնելու նպատակով:

Ի տարբերություն նախորդ երկու խմբերի, որոնք զգում էին հղիության կանխարգելման եւ բնակչության սահմանափակման կարիքը, բայց խտրություն էին

դնում եղանակների միջեւ, քննադատների վերջին խումբը մերժում է վերահսկողության այս ծրագրերը պարզապես դրանց մեջ անհրաժեշտություն չտեսնելով: Ջուլյան Սայմոնն, օրինակ, գտնում է, որ երկրագնդի բնակչության թվաքանակի մեծացման մեջ ոչ մի վտանգ չկա, մոլորակը կարող է բավարարել բոլորի պահանջմունքները, պետք է սոսկ սննդարդյունաբերության նոր տեխնոլոգիաներ, բնական ռեսուրսների շահագործման եւ պահպանման կատարելագործված ստանդարտներ մշակել:

Ինչ վերաբերում է ընտանիքում ծնված երեխաների թվի վերահսկման էթիկական կողմին, ապա որդեծնությանը նպաստելու կամ խոչընդոտելու համար պետական քաղաքականության դեպքում հնարավոր է հասնել առավելագույն արդյունքի: Որոշ երկրներում բազմազավակ մայրերը խրախուսվում են շքանշաններով, սոցիալական արտոնություններով եւ պարգեւավճարներով: Կան նաեւ պետություններ, որտեղ հակառակ արդյունքն է ստացվում քիչ երեխաներ ունեցող ընտանիքներին կենցաղային արտոնություններ պարգեւելու շնորհիվ: Օրինակ՝ Չինաստանում մեկ երեխա ունեցող ընտանիքը ստանում է ավելի լավ աշխատանք, բնակմակերես, իսկ բազմազավակ ընտանիքները ֆինանսական եւ բարոյական տույժերի են արժանանում: Պետական մարմինների մոտեցումից է կախված նաեւ ընտանիքի պլանավորման ծրագրերի թիրախ հանդիսացող խավերի ընտրությունը (ամոթալի կլիներ, նման թիրախի դերում հայտնվեր աղքատ բնակչությունը կամ անցանկալի ազգային փոքրամասնություն տվյալ երկրում): Ամեն դեպքում արհեստածին միջոցներով խախտվում է սերնդաբերության բնական ընտրության իրավունքը:

Որպես բնակչության թվաքանակի աճը կարգավորող միջոց ուսումնասիրողները տեսնում են XXI դարակեսին սպասվող ժողովրդագրական տեղաշարժերը, որոնք կհավասարակշռեն ծնելիության-մահացության, կյանքի միջին տեւողության եւ կենսամակարդակի ցուցանիշերը:

Գրականություն

---

1. Г. С. Хозин. Глобальные проблемы современности. М., 1982.
2. И.А. Родионова. Глобальные проблемы человечества: учебное пособие для учащихся и студентов. 2-е изд., испр. и доп. М., 1995
3. Արամ Հակոբի Սարգսյան "ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԼՈԲԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ"
4. Պատասխանատու խմբագիր՝ Ս. Սարգսյան փիլ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
5. Գրախոսներ՝ Յու. Հովականյան փիլ. գիտ. թեկնածու, դոցենտ Ս. Օհանյան փիլ. գիտ. թեկնածու, դոցենտ